

13453



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

« 04 » 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 260 - 24

Նախաձեռնող՝

«ԱՍ-նախագիծ» ՍՊԸ
ք. Երևան, Բաբաջանյան 19 շ., բն.23

Գործունեությունը՝

Թալին համայնքի Արագածավան բնակավայրի
Մ. Բաղրամյան փողոց թիվ 104 հասցեում նոր
միջնակարգ դպրոցի կառուցում
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 260 - 24

« 04 » դեկտեմբեր 2024թ.

Թալին համայնքի Արագածավան բնակավայրի Մ. Բաղրամյան փողոց թիվ 104 հասցեում նոր միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Արագածավան բնակավայր

Ներածական մաս. Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի Մ. Բաղրամյան փողոցի 104 հասցեում, նախատեսվում է կառուցել ժամանակակից լուծումներով միջնակարգ դպրոց:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի, քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով):

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է՝ կառուցել համապատասխան ստանդարտներով և ժամանակակից պահանջներով դպրոց: Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել 2024 թվականի մարտի 29-ին Արագածոտնի մարզի Թալին համայնքի կողմից տրված (N 30) նախագծման թույլտվությունը, 2021 թվականի



օգոստոսի 6-ին ընկերությանը տրված 02-016-0014-0017 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 06082021-02-0047 վկայականը:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի՝ նախագծվող դպրոցը նախատեսված է կառուցել երկհարկանի՝ 432 աշակերտների համար, որը կունենա բաց մարզադաշտ, մարզահրապարակ, վազքուղի, կաթսայատուն, սավաճք, հարթակներ, սիզամարգեր:

Դպրոցի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշներ են.

- հողամասի մակերեսը՝ 2,5429 հա,
- կառուցապատման մակերեսը՝ 3560,1 մ² /14%/,
- կանաչապատ տարածքի մակերեսը՝ 17 495,2 մ² /68,8%/ ,
- բարեկարգման մակերեսը /ճանապարհներ, ճեմուղիներ, հարթակներ/՝ 4373,7 մ², /17,2%/:

Դպրոցը նախատեսվելու է 35 մ x 91.5 մ առանցքային չափեր և սեյսմիկ կարող բաժանված է 2 հավասար մասնաշենքերի: Միջանցքների առանցքային չափերը նախատեսվելու է 3,5 մ, դասասենյակները՝ 7 մ x 7մ, դրանց միջին մակերեսը կկազմի 48 մ²:

Առաջին հարկի բարձրությունը կկազմի 3.3 մ: Երկրորդ հակի բարձրությունը հաշվարկված է փոփոխական՝ ստորին մասում կկազմի 3.0 մ: Սպորտային դահլիճի բարձրությունը կկազմի 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը 4.5 մ:

Ընդհանուր տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Որպես թաքստոց կձառայի նկուղային հարկը, որի ընդհանուր մակերեսը կկազմի 572 մ²: Տարածքում նախատեսվում է ունենալ ներքին բակ: Առաջին հարկի մակերեսը կկազմի մոտ 3200 մ²: Հարկում տեղակայված կլինեն դասասենյակները, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակը, սպորտդահլիճը, ճաշարանը, խոհանոցը, 3 սանհանգուցները, այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսվելու է նաև սանհանգույց և վերելակ հաշմանդամների համար: Երկրորդ հարկի մակերեսը կկազմի մոտ 2560 մ², որտեղ կլինեն հանդիսությունների դահլիճն, դասասենյակներն և 4 սանհանգույցները: Կառույցի արտաքին պատերի երեսպատումը նախատեսված է տրավերտիներից:

Դպրոցի ջրամատակարարումն և ջրահեռացումն իրականացվելու է Թալինի համայնքապետարանի կողմից հաստատված ջրամատակարարման քարտեզ-սխեմայի համաձայն:

Նախատեսվող ջրագիծը սնվելու է համայնքային ցանցից և միանալու է պոլիէթիլենային ջրագծին: Նախատեսվելու է կառուցել d=50 մմ, L=14.0 մ երկարությամբ պոլիէթիլենային արտաքին ջրագիծ՝ միացման տեղում կառուցելով հրշեջ հիդրանտի և փականի տեղադրմամբ ջրմուղի, երկաթետոնե դիտահոր և դպրոցի պարիսպին կից երկաթետոնե ջրաչափական հոր՝ d=40 մմ ջրաչափով:

Նախատեսվելու է կառուցել d=50 մմ, L=200.0 մ երկարությամբ պոլիէթիլենային ջրագիծ, որից 44.0 մ-ը դպրոցի նկուղային հարկից ջերմային ցանցի կողքով կմտնի կաթսայատուն: Նախատեսվող կոյուղագիծը միանալու է տարածքում նոր կառուցվող կոյուղու մաքրման Տոպա 100 սարքավորմանը: Սարքավորումը կատարելու է եռաստիճան մաքրում: Կենցաղային կոյուղու ցանցը ինքնահոս է:



Ոռոգման համակարգը սնվելու է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվում է մաքրման սարքավորման միջոցով մաքրված ջուրը: Ավելցուկային ջրերի հեռացման համար նախատեսվելու է դրենաժային հորատանցք 15.0 մ խորությամբ Մ125 մմ, որի մեջ կտեղադրվի պոլիէթիլենային խողովակ, խողովակի վրա կբացվեն անցքեր Մ20 մմ տրամագծով:

Ջերմամատակարարումն իրականացվելու է դպրոցի տարածքում տեղակայված կաթսայատնից: Դպրոցում նախատեսված է ջրային ջեռուցում, ջրի մեխանիկական շրջանառու համակարգով: Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ջեռուցման մարտկոցներ, ջերմակարգավորիչ փականներով:

Դպրոցում նախատեսվելու է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ մեխանիկական դրդմամբ:

Նախատեսվելու է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում շինության տանիքին: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված կլինի 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կետքիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից: Դրանք կմիանան փոխակերպիչների մուտքերին, փոխակերպիչների անվանական ելքային հզորությունը 60 կՎտ է (Եռաֆազ):

Փոխակերպիչը և ՓՀՀՏ-ն տեղադրվելու են շենքի ներսում առանձին հատկացված սենյակում:

Հաշվետվությունում եղած տեղեկատվության համաձայն գործունեության իրականացման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չկան:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջանալու է 840 մ³ ծավալով շինարարական աղբ և 9 մ³ ծավալով կենցաղային չտեսակավորված աղբ: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը, պայմանագրային հիմունքներով, կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատվելու է,
- շինություններն ծածկվելու են համապատասխան բարձրությաը անթափանց թաղանթով:
- Փոշենստեցման նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվելու է ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում,



-անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25 խմ ծավալով տարողություն:

Պարզարանում տեղի է կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադք, -կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով,

- շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա,

- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքներում նախատեսվում է ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,

- բոլոր մեքենաները ապահովված կլինեն համապատասխան խլացուցիչներով:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

-Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

-Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ:

-Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

-Աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ 15 օրը մեկ անգամ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազար ՀՀ դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի Մ. Բաղրամյան փողոց թիվ 104 հասցեում նոր դպրոցի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լսում Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն ինչպես նաև Արագածոտնի մարզպետարանը և Թալինի համայնքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր



բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Թալինի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
6. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
7. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
9. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:
10. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ



ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՍ-նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Թալին համայնքի Արագածավան քնակավայրի Մ. Բաղրամյան փողոց թիվ 104 հասցեում նոր դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հրիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Հովիկ Մեսրոպյան